ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Տարեցտարի ընդլայնվում և ամրապնդվում են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գիտական կապերը արտասահմանյան գիտական կենտրոնների հետ։ Ակադեմիայի գիտա-հետազոտական ինստիտուտները և Կենտրոնական գրադարանը սիստեմատիկաբար գրքափոխանակություն են կատարում արտասահմանյան բազմաթիվ գիտա-հետազոտական հիմնարկների ու գրադարանների հետ։ Բավական է նշել, որ Կենտրոնական գրադարանը գրքափոխանակություն է կատարում մոտ 40 արտասահմանյան երկրների՝ ավելի քան 160 գիտական հիմնարկների ու գրադարանների հետ։ Միայն 1957 թվականի ընթացքում ակադեմիայի գրադարանն արտասահմանյան երկրներն է ուղարկել 5310 ու արտասահմանից ստացել է 1470 անուն գիրք ու հանդես։

Ակադեմիայի գիտնականները մասնակցել են մի շարք միջազգային գիտական համագումարների, կոնգրեսների, սիմպոզիումների, կոլոկվիումների, որտեղ հանդես են եկել զեկուցումներով։ 1957 թվականի հունիսին ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը մասնակցել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում կազմակերպված գազային դինամիկայի հարցերին նվիրված սիմպոզիումին և զեկուցում կարդացել «Աստղերի առաջացումը գազային միգամածությունից» թեմայով, իսկ այս տարվա հունիսին Բրյուսելում (Բելգիա) կազմակերպված Սոլվեյի կոնգրեսին նա հանդես եկավ «Գալակտիկաների էվոլյուցիայի մասին» զեկուցումով։ Ակադեմիկոսներ Ա. Լ. Շահինյանը և Ս. Մ. Մերգելյանը մասնակցեցին Հելսինկիում (Ֆինլանդիա) կազմակերպված ֆունկցիաների տեսությանը նվիրված կոլոկվիումին, ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարյանը՝ Լիսաբոնում (Պորտուգալիա) կայացած հիդրավլիկայի հարցերին նվիրված միջազգային 7-րդ կոնգրեսի աշխատանքներին։ ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանը մասնակցել է Մադրիդում (Իսպանիա) հրավիրված բժշկության պատմությանը նվիրված համագումարին և կարդացել զեկուցում։ Տեխնիկական գիտությունների թեկնածու Գ. Ի. Տեր-Սաֆարյանը մասնակցել է Լոնդոնում կայացած գրունտների մեխանիկային նվիրված միջազգային կոնգրեսին։ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Զ. Սիմոնովը մասնակցել է բետոնի տեխնոլոգիայի հարցերին նվիրված ԼԵՀ-Չեխոսլովակյան կոնֆերանսի աշխատանքներին և հանդես եկել զեկուցումով և այլն։

Հայկական ՍՍՌ ԳԱ մի շարք անվանի գիտնականներ վերջին տարիներին ընտրվել են արտասահմանյան երկրների ակադեմիաների անդամներ։ Այսպես՝ 1957 թ. հոկտեմբերին ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը ընտրվել է Գերմանական ակադեմիայի թղթակից անդամ, իսկ այս տարի՝ Ամերիկյան արվեստների և գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ։ Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարյանը ընտրվել է Տուլուզայի (Ֆրանսիա) Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։ Սովետական Հայաստանի աչքի ընկնող մի շարք գիտնականների աշխատանքներ թարգմանվել և տպագրվել են արտասահմանյան երկրներում. ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի «Տեսական աստրոֆիզիկա» աշխատությունը հրատարակվել է Բեռլինում գերմաներեն լեզվով, վերջերս Լոնդոնում ռուսերենից անգլերեն թարգմանվեց և լույս տեսավ «Տեսական աստրոֆիզիկա» ժողովածուն, որի երկու գլուխը գրված է պրոֆեսոր Վ. Համբարձումյանի կողմից։ Այդ ժողովածուի խմբագրությունը նույնպես կատարել է Վ. Հ. Համբարձումյանը։ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանի «Սողքի տեսության մի քանի հարցեր» աշխատությունը հրատարակվել է Փարիզում ֆրանսերեն լեզվով, ակադեմիկոսներ Հ. Գ. Մաղաքյանի «Հանրավայրեր» և Բ. Ա. Ֆանարջյանի «Ռենտգենոգիագնոստիկա» աշխատությունները թարգմանվել են չինարեն և տպագրվել Պեկինում։ Նկատենք, որ չինարեն լեզվով Պեկինում հրատարակվել է նաև «Մասունցի Դավիթ» դյուցազնավեպը։ Չեխերեն է թարգմանվել «Միջնադարյան հայ արձակի նմուշները» ժողովածուն։ «Հայկական նովելները» ժողովա-

ծուն թարգմանվել է գերմաներեն, լեհերեն, չեխերեն և այլ լեզուներով։ Մեր գիտնականների մի շարք հոդվածներ տպագրվել են արտասահմանյան տարբեր ամսագրերում և գիտական ժողովածուներում։ Բեոլինի ակադեմիայի ժողովածուներում է տպագրվել պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի զեկուցումը «Գերմաներեն գրականությունից եղած հայերեն թարգմանությունների մասին», որը գիտնականը կարդացել էր Երևան այցելած գերմանական դելեգացիայի համար։ Մյուս կողմից մի շարք արտասահմանյան գիտնականների աշխատություններ լույս կտեսնեն մեր Գիտությունների ակադեմիայի հրատարակությունում, դրանցից է չեխոսլովակյան հայագետ Ն. Մարտիրոսյանի ակկադերենից հայերեն թարգմանված «Գիլգամեշ» հնագույն արևելյան դյուցազնավեպը։

Մեծ է նաև Հայաստանի Գիտությունների ակադեմիա այցելող արտասահմանյան հյուրերի թիվը։ 1957 թվականից Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում Չինական ժողովրդական ռեսպուբլիկայից ասպիրանտական ուսումնառություն է անց կացնում Ու Ժույ-ֆինը, որը մասնագիտանում է «Սողքի տեսության» մեջ։ Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանում աստրոֆիզիկայի գծով թեկնածուական դիսերտացիա պաշտպանելու համար ուսումնասիրություն է անցկացնում Բելգրադի աստղադիտարանի աշխատակից Վ. Ոսկանյանը։ Մեր հյուրերի արդյունավետ աշխատանքի համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները։ Դա բազմաթիվ նամակներ է ստանում արտասահմանից՝ Հայաստանում ասպիրանտական ուսումնառություն անցկացնելու խնդիրքով։

Այս տարվա ապրիլին մեր ակադեմիայի Զոոլոգիայի ինստիտուտը այցելեց Հելսինկիի (Ֆինլանդիա) համալսարանի պրոֆեսոր Խոկան Լինդբարգը։ Ֆինն գիտնականը ծանոթացավ Զոոլոգիայի ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքներին և իր գիտական աշխատանքների համար հավաքեց անհրաժեշտ նյութեր։

Մարտի կեսերին Ակադեմիա այցելած ամերիկացի փիլիսոփա Ջոն Սոմերվիլը ծանոթացավ Ակադեմիայի Փիլիսոփայական սեկտորում տարվող աշխատանքներին, զրույցներ ունեցավ սեկտորի գիտաշխատողների հետ և հանդես եկավ զեկուցումով։ Մայիսին ամերիկացի գրող, աստղաբաշխության ու աստրոնավտիկայի մասսայականացնող Լլոյդ Մելանը ծանոթացավ Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանում տարվող գիտա-հետազոտական աշխատանքներին, իրեն հետաքրքրող հարցերի մասին զրույց ունեցավ աստղադիտարանի գիրեկտոր ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի հետ։ Երեք օրով Հայաստանի Ակադեմիայի հյուրերն էին Արաբական Միացյալ ռեսպուբլիկայի հնագետները՝ Կահիրեի համալսարանի պրոֆեսոր Ահմեդ Ֆահրիի գլխավորությամբ։ Հյուրերը այցելեցին Գառնի և Կարմիր-բլուր, ուր տարիներ շարունակ հնագիտական պեղումներ են կատարվում։ Նրանք ջերմ ընդունելություն գտան իրենց հայ կոլեգաներ պրոֆեսորներ Բ. Առաքելյանի, Կ. Ղաֆադարյանի և ուրիշների կողմից։ Հյուրերը այցելեցին նաև Բյուրականի աստղադիտարանը, որտեղ հանդիպում ունեցան ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի հետ։

Վերջերս երեք շաբաթով Հայաստան այցելեց ամերիկահայ գիտնական դոկտոր Ավետիս Սանճյանը (Հարվարդի համալսարան)։ Նա այցելեց Գիտությունների ակադեմիայի մի շարք ինստիտուտները, ծանոթացավ այնտեղ կատարվող գիտա-հետազոտական աշխատանքների և գիտնականների հետ։ Նրան հատկապես հետաքրքրում էին հայագիտության բնագավառում տարվելիք գիտա-հետազոտական աշխատանքները։

Ապագայում է՛լ ավելի են ընդլայնվելու Հայաստանի Ակադեմիայի գիտական կապերը արտասահմանյան գիտական հիմնարկների հետ։ Այս տարի ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ է. Դավթյանը կմասնակցի Բուդապեշտում կայանալիք պարազիտոլոգիայի հարցերին նվիրված համագումարին, որտեղ նա հրավիրված է Հունգարիայի ակադեմիայի կողմից։ Իննայի (ԳԴՌ) Ֆրիդրիխ Շիլլերի անվան համալսարանի հրավերով պրոֆեսոր Ա. Գ. Հովհաննիսյանը կմասնակցի համալսարանի հիմնադրման 400-ամյակին նվիրված հոբելյանական տոնահանդեսներին։

Բուլղարական Դեմոկրատական ռեսպուբլիկա կմեկնի հայագետների դելեգացիա, որի կազմի մեջ են ակադեմիկոս Մ. Ներսիսյանը և ակադեմիայի թղթակից անդամ Ա. Ղարիբյանը։

1959 թ. նախատեսված է Երևանում անցկացնել մի շարք կոնֆերանսներ և սիմպոզիումներ, որոնց մասնակցելու համար կհրավիրվեն նաև դիտնականներ արտասահմանյան տարբեր երկրներից։ Տարբեր բնագավառների մի շարք սովետահայ գիտնականներ փորձի փոխանակության և արտասահմանյան գիտության նվաճումներին ծանոթանալու համար կգործուղվեն արտասահմանյան երկրներ։

Թ. ԻՍԱՅԱՆ